

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ

ԷԴԱԿՐԴ ԶՐԱՇՅԱՆ

Յուրաքանչյուր գիտություն իրավունք ունի և պարտավոր է ետ նայել ղենել իր անցած ուղին՝ ոչ միայն կատարված աշխատանքին պատշաճը մատուցելու, այլև իր առջև կանգնած նոր խնդիրները ճշտելու համար: Գիտական մաքի ամեն մի ճյուղի զարգացում բնորոշվում է ներքին միասնությամբ, որը սլայմանավորված է նրա ուսումնասիրության միասնական առարկայով և խնդիրներով, բայց դա ամենևին չի բացառում պատմության տարբեր փուլերում նոր, մինչ այդ անծանոթ պրոբլեմների ու մեթոդաբանական նոր սկզբունքների առաջացումը: Գրականագիտությունը այս մտքի ցայտուն օրինակներից մեկն է:

Երկու գործոն հատկապես կարևոր դեր են խաղում գրականագիտական մտքի զարգացման մեջ. հասարակական կյանքի ու գաղափարախոսության ազդեցությունները մի կողմից և գեղարվեստական պրոցեսի վիճակն ու պահանջները՝ մյուս: Ձևավորվելով հասարակական գիտակցության որոշակի մակարդակի հիման վրա, գրականագիտությունն ինքը դառնում է այդ գիտակցության անբաժան մասերից, նրա հասունության աստիճանի ցուցանիշներից մեկը: Կյանքի կոչվելով դասական և ժամանակակից գրականության ուսումնասիրման և գնահատման նպատակով, գրականագիտական միտքն իր հերթին վերածվում է հասարակության գեղարվեստական առաջընթացի կարեւորագույն խթանիչ ուժի: Այս օրինաչափությունները հատկապես վառ արտահայտվեցին սովետական գրականագիտության պատմության մեջ: Հեղափոխությունից հետո հասարակական կյանքի բուռն ընթացքը և գեղարվեստի ճակատագրում կատարված վճռական փոփոխությունները սկզբից ևեթ պայմանավորեցին գրականագիտության զարգացման ուղղությունը, նրա որոնումներն ու խնդիրները:

Հայաստանում սովետական իշխանության հաղթանակից առաջ հայ գրականագիտությունն արդեն անցել էր զարգացման ուսանելի, երկար ու բարդ ճանապարհ: Հարուստ փորձ էր կուտակվել ինչպես ընթացիկ գրականության վերլուծության և գնահատման, այնպես էլ նրա պատմության, հատկապես հին և միջնադարյան գեղարվեստական հուշարձանների քննական հրատարակության ուղղությամբ: Եվ, այնուամենայնիվ, հեղափոխությունից հետո աջ բնագավառում ևս պետք է կատարվեր և, իրոք, կատարվեց արժեքների լուրջ վերագնահատում, տեղի ունեցան արմատական վերափոխություններ ինչպես գրականագիտական աշխատանքի մեթոդաբանության, այնպես էլ նրա առարկայի, ուղիների և խնդիրների ըմբռնման մեջ: Առաջին պլան մղվեց գրականության գաղափարական բովանդակության, դասակարգային պայքարի հետ նրա բազմակողմանի կապերի դրույթը, որը և դարձավ գեղարվեստ-

տական խոսքի արժեքի ու նշանակության գնահատման կարևորագույն, վճռական շահանիշ: Ծիշտ է, այդ գրույթը հաճախ, մանավանդ 20—30-ական թվականներին, հասցվում էր ժայրահղության, գրականության սոցիալական բովանդակությունը ուղղագիծ և պարզունակ կերպով հասկանալուն: մի երեւոյթ, որն ստացավ «գոեհիկ սոցիոլոգիզմ» անվանումը: Սակայն այդ հանգամանքը՝ ոչ մի դեպքում չպետք է խանգարի տեսնելու այն նորը, որ սկզբից ևեթ հայ գրականագիտության մեջ մտցրեց մարքսիստական-լենինյան հայեցակետը, գրականության պատմությունը և ժամանակակից գեղարվեստական պրոցեսը սոցիալական կյանքի հետ ունեցած բազմազան կապերի մեջ դիտելու սկզբունքը: Հայ սովետական գրականագիտության կողմից այդ սկզբունքի յուրացումն ու ստեղծագործական կիրառումը զգալի շահով հենվում էր նաև այն ավանդույթների վրա, որ դեռ հեղափոխությունից առաջ ստեղծել էր բուլշեիկյան գրական քննադատությունը հանձինս Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ալ. Մյասնիկյանի, Արտ. Կարինյանի և ուրիշների:

Սովետահայ գրականագիտության ուղին հարթ և հանգիստ չի եղել: Հետհոկտեմբերյան հասարակական կյանքի բարդ և դժվարին կեռմանները, գաղափարական վեճերն ու քննադատման իրենց անմիջական արտահայտությունն են գտել նաև գրականագիտության մեջ, պայմանավորել նրա զարգացման ընթացքը: Ծիշտ է, տասնամյակների հեռավորությունից այսօր շատ բան ներկայանում է մեզ ավելորդ կամ պարզապես սխալ: Սակայն բոլոր դեպքերում երևույթը պետք է բացատրվի պատմականորեն և ոչ թե սուբյեկտիվ մոլորմաներով: Կարելի է, օրինակ, հիշել անցյալի գեղարվեստական ժառանգության նկատմամբ սխալ վերաբերմունքի բազմաթիվ և բազմապիսի դրսևորումները՝ սկսած նրա նշանակությունը արմատապես ժխտելու միտումներից 20-ական թվականներին մինչև հետագա տասնամյակներում հայ դասական գրականության առանձին մասերը մեր հասարակությունից օտարելու փորձերը: Գաղտնիք չէ, որ այդ հիման վրա մեզանում մերթ մերժվել են աղգային-ազատագրական շարժման գեղարվեստական արտացոլումները (Աիշանի, Րաֆֆու, Պատկանյանի, Սիւսանյանի երկերը), մերթ միջնադարյան գրականության ուսումնասիրությունն ու հրապարակումները ինքնին համարվել են անցյալի իդեալականացում, մերթ վերապահ վերաբերմունք է արտահայտվել դեպի արևմտահայ գրականությունն ընդհանրապես: Կարելի է վերհիշել նաև 50-ական թվականների սկզբին «միասնական հոսանքի» տեսության դեմ պայքարելու պատրվակով XIX—XX դդ. գրականության և հասարակական մտքի մի շարք խոշորագույն դեմքերին տրված ժայրահղ և անարդարացի գնահատականները: Բարեբախտաբար, այդ սխալները երկարատև չեն եղել, և ի վերջո հաղթել է լենինյան հայացքը անցյալի ժառանգության նկատմամբ սկզբունքային վերաբերմունքի մասին:

Հայ բազմադարյան գրականության պատմության ստեղծումը եղել է այն կարևորագույն խնդիրներից մեկը, որ անցած բոլոր տասնամյակներին կանգնել է մեր գրականագիտական մտքի առջև, թեև տարբեր փուլերում լուծվել է տարբեր դիրքերից, տարբեր ընգրկմամբ ու խորությամբ: Արդեն 20-ական թվականներին պարզ էր, որ նախկինում ստեղծված գրական-պատմական աշխատությունները ալլևս բավարար չեն և պետք է փոխարինվեն նորերով (խոսքը վերաբերում է հայ հին գրականության պատմություն ստեղծելու այն

փորձերին, որ անցյալում ձեռնարկել են Հ. Գաթրջյանը, Ստ. Պալասանյանը, Գ. Զարբհանալյանը և ուրիշներ կամ հայ նոր գրականության պատմության առաջին շարադրանքներին, որոնք պատկանում են Լեոյի, Ա. Արփիարյանի, Վ. Փափազյանի, Լ. Մանվելյանի գրչին)։

Հայ հին և միջնադարյան գրականության ամբողջական պատմության ստեղծման խնդիրը հետհոկտեմբերյան շրջանում կապվում է, ամենից առաջ, խոշորագույն հայադետ Մանուկ Աբեղյանի անվան հետ։ Շուրջ կես դար այդ ուղղությամբ նրա կատարած վիթխարի աշխատանքն իր ամփոփումն ու ավարտումը դտավ 1940—1944 թվականներին գրած «Հայոց հին գրականության սլատմություն» երկհատոր աշխատության մեջ։ Թեև այդ գործը հեղինակի մահվան պատճառով կիսատ է մնացել (շարադրանքը հասցված է մինչև XV դ.՝ ծրագրված XVIII դ. փոխարեն), բայց իր գիտական արժանիքներով այն պատկանում է հայագիտության դասական աշխատանքների թվին։ Նախորդների համեմատությամբ շատ ավելի լրիվ և գիտականորեն համակարգված՝ Մ. Աբեղյանը ներկայացնում է հայ գրականության բազմադարյան ուղին՝ սկսած ժողովրդական բանահյուսության հնագույն նմուշներից և V դ. պատմիչ-գրողներից։ Գրական-պատմական նյութի հարստությունը, նրա ոլորներից և իմաստավորման կայուն սկզբունքները, հեղինակի վերլուծական խոր և զգաստ միտքը Մ. Աբեղյանի աշխատության էական հատկանիշներն են, որոնց շնորհիվ նա կարողացավ բացահայտել հայ միջնադարյան գրականության զարգացման մի շարք յուրահատուկ գծեր և օրինաչափություններ։ Գիտնականի հայտնագործած և հիմնավորած այնպիսի իրողություններ, ինչպես հայ ժողովրդական վեպի զարգացման հիմնական փուլերը, մեր հին մատենագրության բնորոշումը իբրև «եկեղեցա-քաղաքական մաքսուման գրականություն», միջնադարյան բանաստեղծության և առակագրության մեջ հայկական Վերածնության և սոցիալական հարաբերությունների արտացոլման առանձնահատկությունների բացահայտումը, — ամուր կերպով մտան հայ գրականագիտության զինարանը։

Մ. Աբեղյանից հետո հայ հին և միջնադարյան գրականության ուսումնասիրությունն ընթացավ գերազանցապես երկերի քննական տեքստերի հրատարակման և առանձին հեղինակների, ժանրերի և պրոբլեմների մենագրական հետազոտման ուղիով։ Այդ առումով հատկապես նշանակալից է հայ միջնադարյան բանաստեղծների մատենաշարը, որի գրքերի քանակն անցնում է արդեն երկու տասնյակից։ Հավաքված և հրապարակված խոշոր նյութը հնարավորություն է տալիս ավելի լայն և խորացված ներկայացնելու հին և միջնադարյան գրականության մոտ 1500-ամյա պատմությունը, բացահայտելու նրա զարգացման այնպիսի կողմեր, որոնք մինչև այժմ բավարար ուշադրության չեն արժանացել։ Կարելի է հիշատակել, օրինակ, միջնադարյան հեղինակների գեղարվեստական մտածողության, իրականության ընկալման և մարդու պատկերման առանձնահատկության հարցերը, գրական ժանրերի ազգային յուրակերպությունը և այլն։ Սրանք, կարելի է ասել, այսօր դարձել են հայ գրականագիտության օրակարգի հարցեր։ Պետք է հուսալ, որ այդ հարցերին մասամբ կպատասխանեն հայ միջնադարյան գրականության ժանրերին նվիրված կոլեկտիվ աշխատանքը, ինչպես նաև հին շրջանի գրական-գեղագիտական հայացքների հետազոտությունը, որոնք այժմ իրագործվում են ՀՍՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում։ Մյուս կողմից, կյանքը պահանջում

է ստեղծել հայ միջնադարյան գրականության պատմության նոր ընդհանրացնող աշխատություններ, որոնք անհրաժեշտ են ինչպես գիտական, այնպես էլ ուսումնական պահանջների տեսակետից: Այդ առումով հիշատակելի է Մ. Մկրյանի «Հայ հին գրականության պատմություն» աշխատության առաջին հատորը (1976): Այն ընդգրկում է ժողովրդական բանահյուսության հնագույն շրջանից, V դ. դասական պատմագրությունից մինչև X դ. գրականությունը, մինչև Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը:

Հետհոկտեմբերյան տարիներին առավել մեծ ծավալ ու թափ ստացավ հայ նոր գրականության գիտական ուսումնասիրությունը: Ծիշտ է, այդ գրականությունն ընդգրկում է համեմատաբար կարճ ժամանակահատված՝ 100—120 տարի (XIX դ. սկզբից մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը), սակայն այդ ժամանակաշրջանում ձևավորվել, զարգացել և զեղարկվեստական բարձր կատարելության է հասել հայ նոր գրականությունը իր երկու ճյուղերով (արևելահայ և արևմտահայ): Ինչպես իր բովանդակությամբ, այնպես էլ ժանրային կազմով, լեզվով և արտահայտչական միջոցներով այն էապես տարբերվում էր հին և միջնադարյան գրականությունից և դարձել էր դարաշրջանի ու ազգային ոգու հարազատ արտացոլումը նոր պատմական պայմաններում: Հայ նոր գրականության քիչ թե շատ ամբողջական պատմության փորձերն սկսվեցին մեր դարի արշալույսին, բայց դրանք (քացի Լեոյի «Ռուսահայոց գրականությունը» աշխատությունից) հիմնականում հարմարեցված էին գրականության դպրոցական դասավանդման պահանջներին: Սովետական տարիներին այս բնագավառում առաջին հերթին խոսնականում են ակադեմիկոս գրականագետ Արսեն Տերտերյանի բազմաթիվ աշխատությունները, որոնցից լավագույնները հավաքված են 1944 թ. հրատարակված «Հայ կլասիկներ» գրքում: Ինչ վերաբերում է նոր գրականության պատմության գիտական պարբերացմանը և շարադրմանը, ապա այդ ուղղության կատարված առաջին փորձերից էին 1930—1931 թվականներին Ա. Տերտերյանի հրապարակած «Հայ նոր գրականության պատմության» առաջագործությունների մի քանի պրակները, որոնք տալիս էին գրական հիմնական դպրոցների և նրա խոշորագույն դեմքերի բնովթագիրը: Ծիշտ է, այդ բնութագիրը մեծ մասամբ տրվում էր գեհնիկ սոցիոլոգիզմի դիրքերից, որոնցից, բարեբախտաբար, հեղինակը շուտով կտրականապես հրաժարվեց: Իր հետագա աշխատություններում (Արմյանի, Պռոշյանի, Բաֆֆու, Մուրացյանի, Շիրվանզադեի, Թումանյանի, Պարոնյանի, Օտյանի և ուրիշների մասին) Ա. Տերտերյանը երկեն դարձրեց գրականության ժողովրդայնության դրույթը, իբրև գրողի արժեքավորման վճռական չափանիշ:

30-ական թվականների սկզբից փորձեր են արվում հայ գրականության բազմահատոր պատմություն ստեղծելու ուղղությամբ: Այդ փորձերից մեկը ծրագրում էր հայ գրականության պատմությունը հրատարակել յոթ հատորով, որից հինգը պետք է նվիրվեր նոր գրականությանը, մեկը՝ հին և մեկը՝ հետհոկտեմբերյան շրջաններին: Մրագրված հատորներից լույս աշխարհ եկավ միայն երկրորդը, որը տպագրվեց 1933 թ. և ընդգրկում էր XIX դ. 30—60-ական թթ. ռուսահայ գրականությունը: Շուտով, սակայն, պարզ դարձավ, որ այդ հրատարակությունը հիմնվում էր գիտական-մեթոդաբանական սխալ սկզբունքների վրա, որոնց էությունը հանգում էր ազգային գրականության ողջ պատմությունը սոցիոլոգիական չոր տխմաների ենթարկելու մեջ: Բա-

վական է ասել, որ ամեն մի գրողի ստեղծագործությունն սկզբից ևեթ «կցվում էր» հասարակական որևէ հոսանքի և դիտվում նրա նեղ շրջանակներում, իբրև այդ հոսանքի քաղաքական և սոցիալական սկզբունքների ուղղագիծ «գեղարվեստական իլյուստրացիա»։ Այդ առումով պերճախոս են հենց գրքի գլուխների վերնագրերը. «Կղերաֆեոդալական հոսանք. Հարություն Ալամդարյան, Մեսրոպ Թադիագյան», «Բուրժուազեմոկրատական հոսանք. Խաչատուր Աբովյան», «Մանր բուրժուական հեղափոխական հոսանք. Միքայել Նալբանդյան», «Մանր բուրժուական գրողացիական հոսանք. Ղազարոս Աղայան», «Մանր բուրժուական գյուղացիական պահպանողական հոսանք. Պերճ Պռոշյան», «Բուրժուական լիբերալ հոսանք. Սմբատ Շահազիզ» (նույն հոսանքին էր դասվում նաև Գ. Սունդուկյանը), «Բուրժուական մարտական ազգայնական հոսանք. Ռաֆայել Պատկանյան» և այլն։ Պարզ է, որ կենդանի գրական պրոցեսը չէր կարող տեղավորվել այս պրոկրոստյան մահճի մեջ, և գրականագիտական միտքը շուտով հաղթահարեց այդ մտացածին շրջանակները։

Այդ առումով, անշուշտ, մի առաջընթաց քայլ էր հանրապետության գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի կողմից 1940—1941 և 1954—1955 թվականներին հրատարակված հայ գրականության պատմության եռահատորյակը։ Ծիշտ է, այն մտահղացված և գրված էր իբրև միջնակարգ դպրոցի դասագիրք՝ այստեղից բխող գիտամեթոդական և ոճական յուրահատկություններով, սակայն եռահատորյակի հեղինակային կոլեկտիվը որոշակի դրական աշխատանք կատարեց նաև հայ գրականության գիտական պարբերացման, գրողներին սոցիոլոգիական տեսմաններից ձերբազատելու, նրանց ստեղծագործության գեղագիտական բովանդակությունը բացահայտելու ուղղությամբ։

50-ական թվականների երկրորդ կեսին, մեր երկրի քաղաքական-գաղափարական կյանքում կատարված փոփոխությունների շնորհիվ, նկատելիորեն աշխուժացավ նաև գրականագիտությունը։ Այն ավելի լայն ծավալ ստացավ, հնարավորություններ ստեղծվեցին ձեռնամուխ լինելու նոր, ավելի բարդ խնդիրների։ Լույս տեսան բազմաթիվ մենագրություններ և ժողովածուներ հայ դասական և սովետական գրողների ստեղծագործությունների, ինչպես նաև գրական-պատմական և տեսական հարցերի վերաբերյալ։ Այդ ամենի հիման վրա հնարավոր դարձավ գործնականորեն ձեռնարկելու վաղուց նախատեսված խնդրի իրականացման՝ հայ գրականության բազմահատոր պատմության ստեղծմանը։ Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտում ծրագրվեց ստեղծել «Հայ նոր գրականության պատմությունը» հինգ հատորով և «Սովետահայ գրականության պատմությունը» երկու հատորով։ Դրանք, այդ ժամանակ արդեն հրապարակված՝ Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության» հետ, պետք է ամբողջացնեին հայ բազմադարյան դրականության գիտական վերլուծությունը։

1961—1965 թվականներին լույս տեսան «Սովետահայ գրականության պատմության» երկու հատորները, որոնք ստեղծվել են գրականության ինստիտուտի սովետահայ բաժնում (բաժնի վարիչ Մ. Աղաբաբյան)։ Այդ հատորները ներկայացնում են հետհոկտեմբերյան դրականության զարգացման ավելի քան քառասնամյա ուղին, նրա հիմնական փուլերի ընդհանուր բնութագիրը և շուրջ երկու տասնյակ մեծագրական գլուխներ։ Այդ հատորներում արժանի տեղ էին գտել նաև երկար ժամանակ գրականության պատմությունից

արհեստականորեն հեռացված այնպիսի անուններ, ինչպես Ծ. Չարենցը, Ա. Բակունցը, Վ. Թոթովենցը, Գ. Մահարին, Զ. Նսայանը, Մ. Արմենը և ուրիշներ, առանց որոնց սովետահայ գրականության պատկերը ոչ միայն լրիվ չէր, այլև խեղաթյուրվում էր էսպես:

Սովետահայ գրականության պատմությունը, իբրև շարունակվող և զարգացող գրական պրոցեսի վերլուծություն, չի կարող, իհարկե, այս կամ որևէ այլ հրատարակությամբ սպառված համարվել: Մյուս կողմից, ժամանակը ստիպում է միշտ ճշտել և խորացնել մեր հայացքը գրականության անցյալ փուլերի և դեմքերի մասին: Եվ բնական է, որ այսօր՝ 80-ական թվականների սկզբին, մեր գրականագիտության առջև նորից դրված է ինչպես առանձին մենագրական և պորբեմային աշխատությունների, այնպես էլ սովետահայ գրականության նոր, ավելի ամբողջական պատմության ստեղծման խնդիրը:

Շուրջ երկու տասնամյակ մեր գրականագետներին զբաղեցրեց մի դժվարին և կարևոր հարց՝ «Հայ նոր գրականության պատմության» հինգհատորյակի ստեղծումը: Այդ հրատարակության առաջին հատորները լույս են տեսել 60-ական թվականների սկզբին, իսկ վերջին 5-րդ հատորը՝ 1979 թ.: Հինգհատորյակը պատրաստվեց Մ. Աբելյանի անվան ինստիտուտի հայ նոր գրականության բաժնում (բաժնի վարիչ Ս. Սարինյան), ներգրավելով նաև ինստիտուտից դուրս աշխատող մի շարք գրականագետների: Հինգ մեծադիր հատորներում, նախկինում չեղած մասնամասնությամբ, ներկայացվում է մեր ազգային գրականության պատմությունը՝ սկսած XVIII դ. վերջից մինչև XX դ. առաջին երկու տասնամյակները: Ի տարբերություն նախորդ մի շարք փորձերի՝ հայ նոր գրականությունը դիտվում է իբրև մեկ ազգային-գեղարվեստական ամբողջություն, իր երկու՝ արևելահայ և արևմտահայ ճյուղերով, որ շեն առանձնացվում, այլ վերլուծվում են միասնական գրական-պատմական պրոցեսի մեջ: Հատորների ներածական ծավալուն գլուխները տալիս են այդ պրոցեսի համակողմանի բնութագիրը՝ տվյալ ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական իրադրության, մամուլի, գիտության, մյուս արվեստների վիճակի, գրական հոսանքների և ժանրային կազմի հիմնական գծերով: Առաջին հատորն այդ սկզբունքով ներկայացնում է գրական պրոցեսի պատկերը XVIII դ. վերջից մինչև XIX դ. առաջին կեսը, երկրորդն ընդգրկում է 50—60-ական, երրորդը՝ 70—80-ական, չորրորդը՝ 90-ական թվականները: Հինգերորդ հատորը նվիրված է XX դ. առաջին երկու տասնամյակների գրականության քննությանը: Հայ գրականության արժեքների գաղափարական բովանդակության, գեղագիտական յուրահատկության և հասարակական նշանակության լայն բնութագիրը տրվում է խոշորագույն գրողներին նվիրված մենագրական գլուխներում, որոնց ընդհանուր թիվն անցնում է հիսունից: Դարաշրջանի գեղարվեստական կյանքի և գրական զարգացման պատկերը զգալիորեն հարստանում է նշանավոր քննադատներին, ինչպես նաև, այսպես կոչված, «երկրորդ շարքի» հեղինակներին նվիրված ծավալուն ակնարկներում («Այլ բանաստեղծներ», «Այլ արձակագիրներ», «Այլ դրամատուրգներ»):

Բազմադարյան հայ գրականության գիտական-ակադեմիական պատմությունը, որն այսօր ամփոփված է հիշյալ ինը ծավալուն հատորներում, սովետահայ գրականագիտական մտքի գլխավոր նվաճումներից է և միաժամանակ՝ հայրենի գրականության հետագա ուսումնասիրության ամուր հիմքերից մեկը: Այդ և ուրիշ աշխատությունների շնորհիվ այսօր իրական նախադրյալներ

են ստեղծվել նաև, այսպես կոչված, «ճյուղային պատմություններ»՝ գրական կարևորագույն ժանրերի (վեպ, պատմվածք, լիրիկա, դրամա, պոեմ և այլն), ինչպես նաև գեղարվեստական մեթոդների (ռեալիզմ, ռոմանտիզմ, սիմվոլիզմ, սոցիալիստական ռեալիզմ և այլն) զարգացման ընթացքն ու ազգային յուրահատկությունները րացահայտելու համար: Դա այսօր դարձել է դիտական անհետաձգելի պահանջ: Նույնը պետք է ասել նաև հայ գրական օնոմադատության ամբողջական պատմության ստեղծման մասին:

Ավելացնենք նաև, որ մենագրական և ակնարկային գլուխների զուգակցման եղանակը, որով գրված են հիշյալ աշխատությունները, գրականության պատմության միակ հնարավոր ձևը չէ: Այն կարող է շարադրվել նաև գրական-պատմական պրոցեսի հիմնական տարրերի (սեռեր և ժանրեր, ուղղություններ, հոսանքներ և ոճեր) գիտական քննության ճանապարհով: Հայ գրականագիտության մեջ հետազոտության այդ սկզբունքը գրեթե չի կիրառվել, բայց կասկած չկա, որ մոտ ապագայում օրակարգի՝ հարց կդառնա նաև մեր գրականության պատմությունը այդ եղանակով վերստեղծելու խնդիրը:

Հատկապես վերջին երկու-երեք տասնամյակում մեծ աշխատանք կատարվեց մեր դասական գրողների ժառանգության մենագրական ուսումնասիրության ուղղությամբ: Լույս տեսան հարյուրավոր մեծ ու փոքր աշխատություններ, որոնք նվիրված են գրեթե բոլոր հայ նշանավոր հեղինակներին՝ ինչպես հին, այնպես էլ, հատկապես, նոր և սովետական շրջաններին: Շատ գրողների մասին արդեն ունենք բազմաթիվ մենագրական ուսումնասիրություններ, և դա հնարավորություն է տվել տարբեր տեսանկյունից քննելու նրանց ժառանգությունը: Հատկապես մեծ թիվ են կազմում Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Ծ. Չարենցի կյանքի և ստեղծագործության քննությանը նվիրված գործերը: Ուրախալի տեղաշարժերից մեկն էլ պետք է համարել արևմտահայ գրականության գիտական հետազոտության նկատելի աշխուժացումը, որի արդյունքը եղավ նրա խոշորագույն դեմքերին նվիրված մի շարք աշխատությունների հրապարակումը:

Դասական գրողների գիտական ուսումնասիրությունն անընդհատ շարունակվող և խորացող աշխատանք է: Գեղարվեստական մեծ երկերն իրենց բովանդակությամբ անսպառ են և միշտ մղում են նոր խոսք ասելու իրենց մասին՝ հասարակական-գրական զարգացման այն մակարդակի դիրքերից, որոնց հասել է տվյալ ժամանակը: Նշենք նաև, որ գիտության զարգացման ժամանակակից պահանջները հաճախ թելադրում են՝ գրողի կյանքի և ստեղծագործության «կանոնիկ» շարադրանքը տվող մենագրության տիպից գնալ դեպի նրա ժառանգության առանձին պրոբլեմների խորացված քննությունը: Հետազոտության այդ եղանակը գրականագիտության առջև բացում է նոր հեռանկարներ և խնդիրներ:

Հայ սովետական գրականագիտության ակնառու նվաճումներից են նաև դասական գրողների երկերի գիտական (ակադեմիական) հրատարակությունները: Մինչև հեղափոխությունը մեզանում կային առանձին քննական հրատարակություններ՝ կատարված հին և միջնադարյան շրջանի պատմիչների և բանաստեղծների երկերի ձեռագրերի հիման վրա: Սովետական տարիներին այդ աշխատանքը շարունակվեց, լույս են տեսել կամ պատրաստվում են հրատարակության միջնադարյան շատ հեղինակների երկերը՝ առկա բոլոր ձեռագրերի քննական համեմատության հիման վրա: Սակայն տեքստաբա-

նական աշխատանքներն ավելի մեծ չափերով ծավալվեցին հայ նոր գրականության ասպարեզում: Այդ գործի առաջնեկը կարող է համարվել Վահան Տերյանի «Երկերի ժողովածուն» շորս հատորով (1923—1925), Պ. Մակինցյանի խմբագրությամբ: Գիտական հրատարակության բարձր պահանջներով էր կազմված նաև Միսաք Մեծարենցի «Երկերի լիակատար ժողովածուն» մեկ հատորով (1934), բանաստեղծներ Վ. Ալազանի և Վ. Նորենցի խմբագրությամբ: 30-ական թվականների հրատարակություններից պետք է հիշատակել նաև Հ. Թումանյանի «Գեղարվեստական երկերը» (Ե. Չարենցի խմբագրությամբ), Գ. Սունդուկյանի «Երկերի լիակատար ժողովածուն» մեկ մեծադիր հատորով (Ս. Հարությունյանի խմբագրությամբ) և այլն:

30-ական թվականների վերջից և մանավանդ հետպատերազմյան տարիներին հայ դասական գրողների գիտական հրատարակության գործը դրվեց ավելի կազմակերպված հիմունքների վրա: Այդ աշխատանքը հիմնականում կենտրոնացվեց գրականության ինստիտուտի կազմում ստեղծված տեքստաբանության բաժնում: Բազմաթիվ գրականագետների կոլեկտիվ ջանքերի արդյունքը եղան հայ գրողների երկերի մի շարք նոր հրատարակություններ: Այսպես, լույս է տեսել Խ. Աբովյանի «Երկերի լիակատար ժողովածուն» 10 հատորով, Մ. Նալբանդյանինը՝ 4 հատորով (այժմ սկսվել է նոր հրատարակություն՝ 6 հատորով), Հ. Թումանյանինը՝ 6 հատորով (ներկայումս պատրաստվում է նոր հրատարակություն՝ 10 հատորով), Գ. Սունդուկյանինը՝ 4 հատորով, Ռ. Պատկանյանինը՝ 8 հատորով, Պ. Դուրյանինը՝ 2 հատորով, Ե. Չարենցինը՝ 6 հատորով և այլն: Հ. Պարոնյանի «Երկերի լիակատար ժողովածուն» հրատարակվել է երկու անգամ՝ 30—40-ական թվականներին (11 հատորով) և 60—70-ական թվականներին (10 հատորով): Լույս են տեսնում Ա. Բակունցի «Երկերի ժողովածուն» 4 հատորով և Դ. Դեմիրճյանինը՝ 14 հատորով: Հերթի են դրված Բաֆու, Ղ. Աղայանի, Ա. Շահազիզի, Վ. Տերյանի, Ավ. Իսահակյանի, Մ. Պեշիկթաշլյանի, Մ. Մեծարենցի, Դ. Վարուժանի, Սիամանթոյի և ուրիշների երկերի գիտական հրատարակությունները:

Ժամանակակից հայ գրականագիտության մեջ լայն ծավալ է ստացել գրական կապերի և ընդհանրությունների ուսումնասիրությունը: Հետպատերազմյան տարիներին լույս են տեսել մեծ թվով գրքեր և հոդվածներ՝ նվիրված տարբեր ժողովուրդների գեղարվեստական մշակույթի հետ հայ գրականության առնչություններին: Հատկապես արդյունավետ եղավ գրականագետների աշխատանքը XIX—XX դդ. հայ-ռուսական գրական կապերի ուսումնասիրության բնագավառում: Գրվել են հատուկ աշխատություններ ինչպես ռուս գրականության հետ հայ խոշորագույն գրողների կապերի, այնպես էլ հայ գրականության հետ ռուս դասականների առնչությունների մասին: Վերջին տարիներս բացահայտվեցին նոր էջեր հայ-ռուսական գրական-կուլտուրական կապերի տարեգրության մեջ դեռևս Կիևյան Ռուսիայի շրջանում և հետագա դարերում: Որոշակի աշխատանք է կատարվել նաև Արևմտյան Նվրոպայի և Արևելքի երկրների գրականության հետ ունեցած բազմազան կապերի բացահայտման համար:

Ընդհանուր առմամբ հավաքվել է մեծ ծավալի փաստական նյութ, որն այսօր հնարավորություն է տալիս մոտ ապագայում ստեղծելու հայ գրական առնչությունների ամբողջական պատմությունը մի քանի հատորով, անցնելու գրական փոխհարաբերությունների ավելի բարձր մակարդակների քննու-

թյան, հոսքը վերաբերում է գրականությունների միջև կոնտակտային կապերից դրանց տիպաբանական ընդհանրությունների քննությանն անցնելուն, որը հիմք է ստեղծում ավելի խոր բացահայտելու գրական զարգացման համընդհանուր գծերը: Արդեն առաջին քայլերն են արվում այդ ուղղությամբ, դրվում են աշխատություններ, որոնց մեջ գրական փոխառումներն ու ազդեցությունները դիտվում են գեղարվեստական զարգացման ընդհանրությունների շղթայում, իսկ վերջիններս բացատրվում են հասարակական կյանքի ու նրա գեղագիտական յուրացման օբյեկտիվ օրինաչափություններով: Առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում նաև բազմազգ սովետական գրականությունների միջև գոյացած կապերի և ընդհանրությունների ուսումնասիրությունը, որն ունի ոչ միայն գիտական, այլև պրակտիկ-ստեղծագործական նշանակություն: Այստեղ, մասնավորապես, ընդգծվում է թարգմանության տեսության դերը, որն իր տարբեր կողմերով մտնում է ինչպես լեզվաբանության, այնպես էլ գրականագիտության մեջ:

Նշելով մեր գիտնականների մեծ աշխատանքը հայ-ռուսական և հայ-արևմտաեվրոպական գրական առնչությունների ուսումնասիրության ուղղությամբ, չի կարելի չնշել մի ցավալի թերացում: Ռուս և արտասահմանյան գրականության մեր մասնագետները, նախորդ տասնամյակներում կատարված հաջող փորձերից հետո (նկատի ունենք Ս. Հակոբյանի, Հ. Մամիկոնյանի, Ս. Սողոմոնյանի, Ռ. Հովհաննիսյանի աշխատությունները), վերջին տարիներս գրեթե չեն զբաղվում այդ գրականությունների ուսումնասիրմամբ և մասսայականացմամբ մայրենի լեզվով: Այդ է պատճառը, որ մինչև այսօր մենք հայերեն լեզվով դեռ չունենք ռուս և արևմտաեվրոպական գրականությունների ամբողջական դասագրքեր ու ձեռնարկներ, որոնք այնքան ահռափնչոտ են ոչ միայն ուսանողներին, այլև ընթերցող լայն շրջաններին:

50-ական թվականներից նկատելիորեն աշխուժացավ նաև հետաքրքրությունը գրականության տեսության հարցերի նկատմամբ: Հրապարակվեցին ուսումնական ձեռնարկներ, հետազոտություններ գրական ժանրերի, մեթոդների և ոճերի, գրականության մեջ մարդու պատկերման առանձնահատկությունների, գեղարվեստական ստեղծագործության կառուցվածքի և այլ հարցերի մասին: Երկարատև ընդմիջումից հետո նորից քննության նյութ դարձան տաղաչափության, հատկապես հայկական ոտանավորի յուրահատկության հարցերը: Այս ամենը, անշուշտ, նպաստեց բարձրացնելու ժամանակակից հայ գրականագիտության ընդհանուր տեսական մակարդակը, ավելի ակտիվորեն մասնակցելու գրականագիտական մտքի զարգացման համամիութենական պրոցեսին:

Գրականության տեսության բնագավառում ուսանելի է կոլեկտիվ աշխատանքի փորձը, որի արդյունքը եղան այնպիսի գրքեր, ինչպես «Գրական ժանրեր. պատմական զարգացումը և ժամանակակից վիճակը» (1973), «Ավանդույթները և գեղարվեստական զարգացումը» (1976), «Տաղաչափության պրոբլեմներ» (1976), «Սովետահայ գրականության պոետիկան» (1980), ժամանակակից տեսական հետազոտություններին բնորոշ է վերացական դատողություններից ըստ ամենայնի խուսափելու և կոնկրետ գեղարվեստական նյութի հետ կապվելու, տեքստի, պատկերի, կառուցվածքի «զաղտնարաններ» թափանցելու ձգտումը: Գրական-տեսական աշխատությունը հաճախ կառուցվում է մեկ առանձին ստեղծագործության համակողմանի քննության վրա, լրաբեր 11—4

ներկայացնում է կոնկրետ վերլուծական գնահատման և տեսական ընդհանրացումների ընթացքը: Ստեղծագործության գեղարվեստական յուրահատկության՝ պոետիկայի հարցերի նկատմամբ աճող հետաքրքրությունը մղում է երկը դիտելու իբրև ամբողջական համակարգ՝ իր բոլոր մասերի փոխադարձ կապերով և պայմանավորվածությամբ: Այս ամենի շնորհիվ, կարելի է ասել, ժամանակակից տեսական գրականագիտությունը էապես հարստանում է գրականության պատմության ու քննադատության տվյալներով և, իր հերթին, հարստացնում է նրանց:

Հետազոտության ուղիներն ու եղանակները ժամանակակից գրականագիտության մեջ բազմազան են, և դա գրականության ներքին հարստությունները բացահայտելու լայն հնարավորություններ է ընձեռում: Օրինակ, ուսումնասիրության ավանդական սկզբունքների կողքին, այսօր լայնորեն կիրառվում են ազգային գրականությունների պատմահամեմատական և տիպաբանական հետազոտության ձևերը, երբ, հենվելով գեղարվեստական գիտակցության համընդհանուր օրինաչափությունների վրա, միաժամանակ ցույց են արվում գրական ստեղծագործության ազգային յուրահատկության և ստեղծագործական անհատականության անկրկնելի գծերը: Լայն կիրառություն է ստանում գրականության պատմաֆոնետիկոնալ ուսումնասիրությունը, որն իր առջև խնդիր է դնում բացահայտել տարբեր դարաշրջաններում գրական երկերի ընկալման յուրահատկությունները՝ կապված հատարական հարաբերությունների, հոգեբանության և գեղագիտական ըմբռնումների ընդհանուր զարգացման հետ: Հետազոտության այս եղանակը հենվում է քաղաքացիական պատմության, փիլիսոփայության, գեղագիտության և հոգեբանության տվյալների վրա, ձգտում է ցույց տալ գրականության և նրա ընկալման բազմազան կապերը այդ գործոնների հետ: Ժամանակակից գրականագիտության մեջ որոշակի հետաքրքրություն են հարուցում նաև գրականության ստրուկտուրալ (կառուցվածքային) և սեմիոտիկական (նշանային) ուսումնասիրությունը, արվեստն իբրև «իրականության մոդելավորման» ձևերից մեկը դիտելու տեսությունը և այլն: Չի կարելի աչք փակել գրականության հետազոտման այս և ուրիշ եղանակների առջև, չօգտվել դրանց ընձեռած նոր հնարավորություններից: Բայց շատ ավելի սխալ կլինի դրանցով միակողմանիորեն տարվելը, գրականության ուսումնասիրության ավանդական սկզբունքներից հրաժարվելը: Պետք է խելացիորեն զուգակցել հետազոտության «ավանդական» և «նոր» եղանակները՝ հենվելով մարքսիստական մեթոդաբանության սկզբունքների վրա: Հայ գրականագիտության ապագան խոշոր շափով կախված է այն բանից, թե որքանով կկարողանանք հասնել այդ բնական զուգակցմանը:

Հայտնի է, որ գրականագիտության ամենից ակտիվ և ներգործոն բաժինը գրական քննադատությունն է, որը կոչված է ոչ միայն անմիջաբար արձագանքելու գեղարվեստական կյանքին, այլև ազդելու նրա ընթացքի վրա: Մեր հասարակության կյանքում և գեղարվեստական պրոցեսում նրա բարձր կոշտն ու խնդիրները բազմակողմանիորեն թնութագրված են ՍՄԿԿ կենտկոմի՝ «Գրական-գեղարվեստական քննադատության մասին» հայտնի որոշման մեջ, որն ընդունվեց 1972 թվականին:

Իրական քննադատության և քննադատի գեղարվեստական պրոցեսի սերտ, անխզելի կապը հիմք է առնում ասելու, որ քննադատության պատմությունը որոշ իմաստով բո՛ւմ գրականության պատմությունն է՝ բեկված նրա անմիջա-

կան լրնկալման և գնահատականների մեջ: Քննադատությունը գրական-պատասական պրոցեսի անբաժանելի մասն է, որովհետև, օգտվելով Մ. Նալբանդյանի պատկերավոր բնորոշումից, գրականությունն առանց քննադատության նույնն է, ինչ մարմինն առանց հոգու: Սակայն այս հիման վրա սխալ կլինի գրական քննադատությունը դուրս հանել գրականագիտության ընդհանուր համակարգից, ինչպես հաճախ վարվում են վերջերս (այդ տրամաբանությամբ էլ տարածվում է «գրականագիտություն և քննադատություն» բառակապակցությունը): Քննադատության յուրահատկությունն այն է, որ այն օրգանապես մտնում է և՛ գրական-գեղարվեստական պրոցեսի, և՛ որոշակի գիտական համակարգերի՝ գրականագիտության և արվեստագիտության մեջ: Քննադատության մեջ ներդաշնակորեն միաձուլվում են գիտական և հրապարակախոսական սկզբունքները, և սխալ կլինի այդ կողմերից մեկն ու մեկը անտեսել:

Անցած վեց տասնամյակում հայ գրական քննադատությունը, շնայած բոլոր շեղումներին կամ մոլորություններին, եղել է գրական զարգացման հավատարիմ հայելին և, ընդհանուր առմամբ, ճիշտ կողմնորոշում է տվել գրական-գեղարվեստական զարգացման: 20—30-ական թվականներին հատկապես արդյունավետ եղավ քննադատների ավագ սերնդի գործունեությունը նոր գրականության գաղափարական և գեղարվեստական հիմունքները պարզաբանելու, դատական ժառանգության արժեքները պաշտպանելու ուղղությամբ: Խոսքը վերաբերում է Արտ. Կարինյանի, Հ. Սուրխաթյանի, Պ. Մակինցյանի, Հ. Գյուլիքեխյանի, Ս. Հակոբյանի, Յ. Խանզադյանի, Տ. Հախումյանի, Խ. Սարգսյանի և ուրիշների դրական-քննադատական ելույթներին, որոնք խոր հետք թողեցին գրականության հետագա ընթացքի վրա:

Հետպատերազմյան տարիներին նկատելիորեն բարձրացավ գրական քննադատության ներգործուն ուժը, նրա մասնագիտական մակարդակը: Հայնացան նրա ընդգրկման շրջանակներն ու ժանրային կազմը՝ պրոբլեմային հոգված, այս կամ այն ժանրի տեսություն, էսսե, դիմանկար, մեմորիստիկա, ժամանակակից գրողի մասին և այլն: Այդ բնագավառում, ինչպես նաև գրականության պատմության և տեսության հարցերի հետազոտման մեջ նշանակալից են հանգուցյալ գրականագետներ Հ. Սալախյանի, էդ. Թոփչյանի, Ա. Ինճիկյանի, Հ. Մուրադյանի, Վ. Թերզիբաշյանի, Ս. Սողոմոնյանի, Ա. Արիստակեսյանի և ուրիշների ժառանգությունները: Ժամանակակից գրական զարգացման համակողմանի «քննադատական տարեգրություն» ստեղծելու ուղղությամբ այսօր արդյունավետ կերպով աշխատում են ավագ և երիտասարդ սերնդի բազմաթիվ գրականագետներ:

Հայ գրականագիտության հետագա զարգացումն անհրաժեշտաբար կապված է ոչ միայն անցյալի և արդի գրականության ավելի խոր և հանգամանալի ուսումնասիրության, այլև նրան նոր կողմերից և նոր հայեցակետով մոտենալու հնարավորության հետ: Ե՛վ գրական-պատմական հետազոտության, և՛ տեսական ընդհանրացումների և թե՛ ժամանակակից գրական պրոցեսի վերլուծության ընթացքում կարևորագույն խնդիրներից մեկը մնում է գրականության գաղափարական և գեղագիտական հատկանիշներն իրենց բնական միասնության մեջ բացահայտելը: Գրական ստեղծագործության «վերին շերտերից»՝ նրա թեմատիկ-գաղափարական բովանդակության վերլուծությունից անհրաժեշտ է գնալ դեպի գեղարվեստական պատկերի, ժանրի, մեթոդի, ռեժիսուրի և կառուցվածքի համակարգային քննությունը: Կյանքը մեր առջև հրա-

մայրարար դնում է նաև գրականագիտական աշխատության առավելագույն մատչելիության հասնելու, նրա լսարանն ըստ հնարավորին ընդլայնելու խնդիրը: Գրականագիտությունն իր հեաագոսման առարկայով և հումանիտար ընույթով չի կարող լինել և չպետք է լինի սոսկ մասնագիտական նեղ շրջանների սեփականությունը. այն պետք է կարողանա իր խոսքը հասցնել ընթերցող լայն շրջաններին, իհարկե, ընդամին չիջեցնելով հարցադրումների գիտական լրջությունն ու խորությունը:

Վերջապես, ժողովուրդների հոգևոր մերձեցման և կուլտուրական արժեքների ինտենսիվ փոխանակման ժամանակակից փուլում կարևոր նշանակություն է ձեռք բերում հայ գրականության լայն տարածման և պրոպագանդման խնդիրը: Այն առումով անհետաձգելի պահանջ է ուսներեն և օտար լեզուներով հայ գրականության րազմահատոր (երեք մաս չորս հատորով) պատմության ստեղծումը: Դա հնարավորություն կտա մեր ժողովրդի ստեղծած գրական արժեքները դիտելու «համաշխարհային գրականության կոնտեքստում», մտցնելու լայն գիտական շրջանառության մեջ:

Զարգացման վաթսուհամյա ուղին անցած և ստեղծագործական հարուստ փորձ կուտակած հայ սովետական գրականագիտությունը բոլոր տվյալներն ունի իրականացնելու իր առջև կանգնած խնդիրները:

НА ПУТЯХ НАУЧНОГО ИЗУЧЕНИЯ ЛИТЕРАТУРЫ

ЭДУАРД ДЖРБАШЯН

Резюме

В статье прослежены основные вехи развития армянского советского литературоведения за 60 лет. Подводятся главные итоги большой работы, проделанной армянскими литературоведами в области изучения истории средневековой, новой и советской армянской литературы, литературных связей, теории литературы, текстологии, критики современного литературного процесса. Особо выделены монументальный труд М. Абегяна «История древнеармянской литературы» в двух томах (1944—1946), коллективные работы «История новой армянской литературы» в пяти томах (1962—1979), «История армянской советской литературы» в двух томах (1961—1965). Эти издания, вместе взятые, составляют многотомную академическую историю армянской литературы, насчитывающей более 15-ти веков.